



ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 185

31 ՄԱՐՏ 1915

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



Անոնք որ կը փափաքին Արճագանցի պակաս թիւերը լրացնել, իւրաքանչիւր թիւի համար մէյմէկ դահեկան ղրկելու են ։

ԱԶԳԱՅԻՆ ՍԻՒՆՀՈՂՈՍ Կ. ՀԱՅՈՑ

Տպագրութիւնը աւարտած է և կը ծախուի	40 դահեկանի :
Գաւառներու համար փոսքայի ծախք	10 դահեկան :



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹ-ԱԹ-ԵՐԹ-

Հինգերորդ տարի 31 Մարտ 1915 Թիւ 185

«Մըբազան Քահանայապետն Պիոս Ժ. իր մատրէ որ Կաթողիկէ Արձագանգ շարքաքերքը շա-
բաւակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
նէ, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մատրքանաց արգիւնաւորութեան համար
Մըբազան Հայրն սրտագին կ'օրհնէ յետալ Շարքաքերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ըմբեղողները»:

Նամակ Կարգ. Մէրի սէյ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ.Գ. Թեոքթիմ Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուտնաւորաւ:

ԴԵՊՅԵՐ ԵՒ ԱԿՋՐՈՒՆՔՆԵՐ

ԱՌԵՏՄԱՆ ԱԹԹԻԻ

Բ.

Արքայութիւնն է որ առջեւնիս կը
պարզուի, արքայութիւնը անժամանակ,
անանցեալ, անապագայ, միշտ-ներկայ:
Արեւուն լոյսէն անհունորէն պայծառ,
անհունորէն գեղեցիկ Փառաց լոյսը խոր-
հրդաւոր, թափանցիկ, թեթեւ ամպե-
րով չըջապատուած աստուածութեան օ-
թեւանէն՝ չըջափիւռ կը տարածուի եւ
կ'ողողէ հրեշտակներու ինը դասերը, որոնք

սաւառնաթեւ կը խայտան, կը պարեն,
կ'երգեն, կը վայելեն առատ առատ ինչ որ
միտքը կը յագեցնէ, ինչ որ կամբը կը գո-
հացնէ, ինչ որ կ'երջանկացնէ, ու խոնարհ
երկրպագութեամբ կ'օրհնեն ու կը փա-
ռաւորեն Արարիչը: Ամենասուրբ երրորդու-
թեան երեք անձերը իրենց մշտազուարճ
օթեւանէն ակնարկնին ձգած աշխարհի
վրայ, կ'արգահատին, կը գթան՝ տես-
նելով մարդոց թշուառ վիճակը, անտնոյ
հետզհետէ դժոխքին խորքը գահավի-
ժիլը. կ'արգահատին, կը գթան. եւ ինչ-
պէս մարդը ստեղծելու ատեն խորհուրդ-
ըրին եւ ըսին. Արաւցում մարդ, նոյնպէս
դարձեալ խորհուրդ կ'ընեն ու կ'ըսեն,
Փրկեսցումք զմարդն:

Ի՞նչ է մարդը, Աստուած իմ, որ դուն իրեն համար խորհուրդ կ'ընես, դու՛ն որ երջանիկ ես ըստ ինքեան և անկարօտ ոեւէ բանի: Տիեզերք բոլոր ոչինչ է քու առջեւդ, տիեզերքի մէջ լսկ հիւլէ մըն է մարդը. ի՞նչ հոգ թէ այդ հիւլէն կորսուի. ո՞վ է մարդ զի յիշես դու զնա, կամ որդի մարդոյ քե այց ինչ արասցես դու նմա (Սղմ. Բ. 5):

Բայց ո՛չ, Աստուծոյ բարութիւնը այլ ազգ կը դատէ և կ'որոշէ փրկել մարդը. փրկեսցում գնարդն: Ո՞վ անսահման բարութիւն, որ միշտ կը ձգտի արտազերուլ, հաղորդուիլ, և օժտել ուրիշները իր պարգեւներով:

Սակայն ինչպէս որ անսահման է Աստուծոյ բարութիւնը, անսահման է նոյնպէս անոր արդարութիւնը: Անհուն բարութիւնը կ'ուզէ փրկել յանցաւոր մարդը, անհուն արդարութիւնը կ'ուզէ անկէ լիուլի հատուցում: Մարդուն գործած մեղքը անբաւ էակին դէմ ըլլալով անչափ պարտք մը կը դնէ իր վրայ: Ի՞նչպէս պիտի վճարէ մարդը այս պարտքը, ի՞նք, որ ինչ որ ունի, հունաւոր է, չափաւոր է:

Կը տեսնէ՞ք, արարչութեան խնդիրէն մեծ է այս մարդուն փրկութեան հարցը: Խօսք մը, հրաման մը բաւական եղաւ երկինք և երկիր իրենց բոլոր զարդերով երեւան բերելու. ափ մը հող, շունչ մը հերիք եղաւ մարդը ստեղծելու. բայց մարդը փրկելու համար, իրարու դէմ ելող անհուն բարութիւնն ու անհուն արդարութիւնը հաշտեցնել հարկ կ'ըլլայ. հաշտութիւն մը, որ մեզի անկարելի կ'երեւի: Ո՞վ երկինք, ի՞նչ պիտի ըլլայ ուրեմն անկեալ մարդը: Անկարող հատուցանելու իր պարտքը՝

դեւերուն պէս պիտի դատապարտուի՝ գեհէնի յաւիտենական տանջանքներուն: Ո՛չ ո՛չ, մի՛ յուսահատիք, ո՛վ մարդիկ:

Աստուծոյ իմաստութիւնը կը լուծէ այս բարութեան եւ արդարութեան հանած ամենակնճռոտ խնդիրը: Որդին Աստուած կը դառնէ միակ կերպը ըստ արժանւոյն լիուլի հատուցում՝ ընելու Հօր արդարութեան և փրկելու մարդկային ազգը: Այո՛, կ'ըսէ, Հայր իմ, մարդիկ արժանի են դժոխքի և բոլորովին անկարող ինքզինքնին անկէ ազատելու, անկարող լիովին հատուցում ընելու քու արդարութեանդ. սակայն ես պիտի չթողում որ կորսուին այս մեր ստեղծած բանաւոր արարածները: Այո՛, այժմ ես ալ չեմ կարող իրենց մեղքին համար պահանջած ճիշդ լիուլի հատուցումը ընել. սակայն ինքզինքս պիտի դնեմ այդ պահանջը կատարելու յարմար վիճակի մը մէջ: Պիտի երթամ առնում իրենց բնութիւնը, պիտի առնում իրենց պէս մարմին, հոգի, պիտի ըլլամ իրենց պէս մարդ. մարդկութեամբս պիտի չարչարուիմ, մեռնիմ, և աստուածութեամբս անսահման արժէք հաղորդելով իմ չարչարանացս և մահուանս, լիովին հատուցում պիտի ընեմ քու անհուն արդարութեանդ և պիտի փրկեմ զիրենք: Ասով մէկ կողմէն քու արդարութիւնդ գոհ պիտի ըլլայ, միւս կողմէն մարդիկ հեշտեալ փրկութեան պիտի հասնին՝ կարող ըլլալով այնուհետեւ կատարել, առանց մեղքի, այն մեր բանաւոր արարածներուն կամքին մէջ կարծես տարրացած փափաքը, որ այնքան կորստեան պատճառ եղաւ: Ստեղծեցիր հրեշտակները, անոնց մէկ մասը փափաքեցաւ ինծի նմանիլ և դատապար-

տուեցաւ։ Ստեղծեցիր մարդը, ան ալ փափաքեցաւ ինծի պէս ըլլալ և զրկուեցաւ երջանկութենէ։ Ես պիտի երթամ այնպիսի վիճակ մը առնում, այնպիսի կեանք մը վարեմ, որ մարդը՝ իր ինծի նմանելու փափաքը կատարելով ոչ միայն չմեղանչէ, այլ նաեւ սրբանայ, կատարելութեան հասնի։ Պիտի երթամ ըլլամ խոնարհ, որպէս զի մարդը ինծի նմանելով, ազատի հպարտութենէն, ամէն չարեաց նախապատճառէն։ Պիտի ըլլամ աղքատ, որպէս զի մարդը ինծի հետեւելով զերծանի աշխարհի հարստութեան անկարգ յարումէն, որ զինքը կորստեան կը մատնէ։ Պիտի անցընեմ վշտալի կեանք մը, որպէս զի մարդը ինծի հետեւելով ազատի այն զգալարանաց հեշտութեան մէջ իր երջանկութիւնը փնտռելու յիմարութենէն։ Հերիք է, հայր իմ, հերիք է մնան խեղճերը ամէն տեսակ մութութեանց և մոլորութեանց խաւարին մէջ։ Երթամ լուսաւորեմ զիրենք։ Երթամ իրենց ծանուցանեմ քեզ ցոյց տամ կուռքերուն ունայնութիւնը։ Երթամ լուսաւորեմ, փրկեմ զիրենք։ Բայց այս բանիս համար պէտք է որ ամէն տեսակ տանջանք, կորանք, անարգանք կրեմ։ Հոգ չէ, ամէն ինչ յանձն կ'առնում յօգարակամ։

Աստուած իմ, Բա՛նդ Յաւիտենական, թո՛ղ կու տաս ինձ, խեղճ ողորմելի արարածիս, համարձակութիւն կու տա՛ս ինձ հարցում մը ուղղելու քու երկրպագելի մեծ վայելչութեանդ։ Դուն ամէն բան գիտես, դուն ամէն ինչ կը տեսնես, քեզի համար անցեալ, ապագայ չկայ, ալ ամէն բան ներկայ է։ Կը տեսնես ուրեմն թէ մարդիկ ի՞նչ ապերախտ ընթացք պիտի բռնեն քեզի նկատմամբ։

արդ ի՞նչպէս արժանի կը համարիս զիրենք այդքան շնորհքի։ Դուն փառաց ամբողջ պիտի իջնես նուազ աշխարհ մը, իրենց անշուք բնութիւնը պիտի առնուս, պիտի չարչարուիս, կեանքդ պիտի զոհես իրենց համար որ քեզ անարգեր, թշնամաներ են, որ գերի են սատանային, խանձող դժուրի, որդ՝ գետնի։ Դուն պիտի մեռնիս զիրենք յաւիտենական մահուրնէ փրկելու համար, և իրենք դարձեալ ապերախտ պիտի ըլլան։ Շատերը քեզի պիտի չհաւատան, քեզ խաբերայ պիտի կոչեն։ Շատերը քեզ պիտի հայհոյեն, հիւսան որդի, նազովրեցի անունով պիտի ծաղրեն, քամահրեն։ Քու հետեւողներէդ, երեք դարու մէջ միայն, տասնուհինգ միլիոնի չափ ամէն տեսակ տանջանքներով պիտի սպաննեն։ Շատերը, և, ո՛հ, այս աւելի անտանելի է, շատերը քեզ ճանչնալէ, անճառելի շնորհքներդ վայելելէ յետոյ քեզի դէմ պիտի դառնան, իրենց չար օրինակներով պիտի դաժակեցնեն ուրիշները, պիտի արհամարհեն երկնային խօսքերդ, նորէն նորէն քեզ պիտի խաչեն իրենց մեղքերով, որչափ որ իրենց կողմէն է։

Սէր յաւիտենական սիրեցի զեզ (Երեմ. ԼԱ. 3), կը պատասխանէ Որդին Աստուծոյ։ Կը սիրեմ քեզ, կ'ըսէ, ո՛վ մարդ, կը սիրեմ քեզ յաւիտենական սիրով։ Եւ այս սէրը կը գիւրացնէ ինծի ամէն դժուարութիւն, կը քաղցրացնէ ամէն դառնութիւն, կը բարձրացնէ ամէն ցածութիւն, ոչինչ կ'երեւցնէ ամէն ապերախտութիւն։ Կը սիրեմ մարդկութիւնը անհուն սիրով մը, և եթէ իմ ամէն զոհողութիւններովս, իմ ամէն տանջանքներովս, միայն հոգի մը կարե-

նամ փրկել, միայն հոգի մը դժոխքէն ազատել, արքայութեան արժանաւորել, դարձեալ, դա՛րձեալ ուրախութեամբ յանձն պիտի առնում ամէն տանջանք, ամէն զոհողութիւն: — Ո՛վ սէր անհուն, սէ՛ր անմահունի, սէ՛ր ննճառելի, սէ՛ր երկրպագելի, պաշտելի: — Անիծեալ ըլլայ այն մարդը որ չի սիրեր այսպէս անհուն սիրով զինք սիրող Աստուած մը. եթէ ո՛ր ոչ սիրէ զՅիսուս, եղիցի նզովեալ, մարտնասաց (Ա. Կորն. ԺԶ. 22). Ո՛ր նզովեալ ըլլան այն օրերը, վայրկեանները, ուր ես այսպիսի Աստուած մը չսիրեցի, զինք տրամեցուցի, վշտացուցի, սիրտը խոցեցի:

Սէր յաւիտեական սիրեցի գինգ: Կը սիրէ մեզ, ո՛վ մարդիկ. ոէրը դուռեր է զինք ամբողջովին. ացլեւս իր աչքին չե՛րելիր իր մեծութիւնը, մեր փոքրիկութիւնը, իր անհունութիւնը՝ մեր ոչնչութիւնը, իր բարութիւնը՝ մեր չարութիւնը, իր արժանապատուութիւնը, մեր անարժանութիւնը: Սէրը կը դիւրացնէ ամէն բան. Մարգեղութեան վճիռը կը արուի. Աստուածութիւնը չընկալուող ամպը կը ճեղքի. Գաբրիէլ երկինքի պալատականներուն գլխաւորներէն մին վեր կը կանչուի. անոր կը հաւտացուի Ամենասուրբ Երրորդութեան ամենածածուկ Խորհուրդին վճիռը, և կը զրկուի աշխարհ, որպէս զի հազորդէ զայն որու որ անկ է. Հոս ուրեմն տեղի պիտի ունենայ Գ. տեսարանը զոր Ս. Պօղոս մեր առջեւ կը պարզէ ըսելով. եւ եղև ի կնոջէ:

Գ.

Նազարէթի մէկ անկիւնը փոքրիկ խուցի մը մէջ դեռահասակ կոյս մը ծուներ դրած, պայծառ աչքերը երկինք ուղ-

ղած, վարդ չըթները կը շարժէ. աղօթք մը կը միմնջէ, աղօթք մը ջե՛րմ, սրտաբուխ. Առաքեալ, Տէր, զոր առաքելոց ես. զրկէ՛, Տէ՛ր, Մեսիան որ պիտի ազատէ խեղճ մարդկութիւնը իր ներկայ թըշուառ փրճակէն:

Հո՛ն, ահա՛, այն փոքր սենեակը կը մօնէ Գաբրիէլ, և առանց սպասելու որ աղօթող կոյսը, այն հոգեղէն արարածը, ելլէ նախ զինքը ողջունէ, ինչպէս տեղի ունեցած կը տեսնենք ուրիշ ամէն հրեշտակներու երեւումներուն մէջ, ինքը կը կանխէ, կը խոնարհի անոր առջեւ և կ'ըսէ. Ուրախ լեր, քե՛րկրեայր. Տէր ընդ քեզ (Ղուկ. Ա. 28). Մարիամ այս գովեստի խօսքերը լսելով, երկիւղած և խեղճաւոր կոյսի մը պէս, կը սկսի խռովիլ, վրդովիլ և խորհիլ թէ ի՞նչ կրնայ ըլլալ այս ողջոյնը:

Մի՛ վախճար, Մա՛րիամ, կը կրկնէ երկնային պատգամաւորը, որովհետեւ Աստուծոյ առջեւ շնորհի՛ գսար, պիտի ծնանիս որդի մը եւ անոր անունը Յիսուս պիտի դնես. Անիկա մեծ պիտի ըլլայ, Բարձրեղոյն որդին պիտի կոչուի: Աստուած անոր պիտի տայ՝ անոր Հօրը Դաթի արքոռը: Ան յաւիտեան պիտի քաջաւորէ Յակոբայ տանը վրայ. եւ անոր քաջաւորութիւնը վախճան պիտի յունենայ (Ղուկ. Ա.): Այն՝ որուն դէմ մայր պիտի ըլլաս, Մեսիան է, Ազամին խոտանցուած, Մարգարէներէն գուշակուած, բոլոր աշխարհէ սպասուած Մեսիան:

Մարիամ՝ դեռ չի հանգչիր, չի հանդարտիր բոլորովին: Խոհեմ կոյսի մը պէս կ'ուզէ գիտնալ թէ ի՞նչ կերպով այս հրաշքին միջնորդ պիտի ըլլայ ի՞նքը որ կուտութիւն ուխտեր է և ամէն գնով կ'ուզէ զայն պահել: Ուստի կը

հարցնէ. Զխաւ՝ոյ շինիցի ինձ աչո, քանզի զայր ոչ գիտեմ (Անդ): Ի՛նչ կուտական մարութիւն: Հրեշտակապետ մը եկեր է Աստուծոյ կողմէն, ամենամեծ խոստումներ կ'ընէ իրեն. մայր պիտի ըլլաս կ'ըսէ, Մեսիային. և ան դեռ կը տատամի, իր հաւանութիւնը տալէն կը քաշուի. և կարծես պատրաստ է ըսելու թէ՛ Կարելի չէ այդ, որովհետեւ ատոր մէջ կուտութեան վասնդ մը կը նըշմարուի:

Փարատի՛ն թող տարակոյսներդ, Մարիամ, կուտութեանդ փաստ պիտի չհասնի երբեք: Սուրբ Հոգւոյն պօրութեամբը տեղի պիտի ունենայ այդ. Հոգին Սուրբ եկեացէ ի քեզ և զօրութիւն Բարձրեցոյն հովանի շիցի ի վերայ քո (Անդ): Օ՛ն, փութա՛ ուրեմն, տո՛ւր հաւանութիւնդ, արտասանէ՛ ամենահրաշ Եղիցիդ: Ասոր կը սպասեն Հոյր, Որդին և Ս. Հոգին, ատոր կը սպասեն քառասունէ աւելի դարեր. ատոր կը սպասեն տիեզերք բովանդակ, անհամբեր, կարօտագին: Աստուծոյ բերնէն ելած եղիցի մը յառաջ բերաւ երկինքն ու երկիրը. եղիցի մը քու բերնէդ որ ելլէ աւելի մեծ խորհուրդ մը յառաջ պիտի գայ: Ս. Կոյսը գլուխը կը ծռէ, և միտքը հաւատքի լոյսով ուղղուն, սիրտը՝ Արարչին սուրբ սիրով զեղուն, Հոգին բոլոր խորին խոնարհութեան խոկերով թաթաղուն, կը համայնեցի Աստուծոյ կառնին և կ'ըսէ. Եղիցի: Ո՛վ ամենապրանշ եղիցի. Բանը խկոյն մարմին կ'ըլլայ. եւ Բանն մաւրմին եղել (Յովհ. Ա. 14). անժամանակը կ'ըլլայ ժամանակաւոր առանց անժամանակ ըլլալէն դադրելու. ստեղծողը կ'ըլլայ ստեղծուած առանց ստեղծուելու:

Ըլլալը կ'որոնցնելու. Կոյսը կը յղանայ առանց կուտութեան փաստ մը հասնելու:

Ս.յս սուրբ խորհուրդին վրայ գոնէ փոքր գաղափար մը կազմելու համար գիմն'նք լուսերեւոյթի մը որով սովորութիւն է մեկնել զայն: Արեւուն ճառագայթը, որ կու գայ, կը մտնէ ապակիէ կարմիր սրուակի մը մէջ ամէն բանէ աւելի լոյս կրնայ սփռել այս խորին խորհուրդին վրայ: Ճառագայթը արեւուն իբրեւ ծնունդն է, որդին է, անկէ կ'ելլէ հոս կու գայ. բայց անկէ չի բաժնուիր, թէ՛ հոն է և թէ՛ հոս միանդամայն: Այսպէս ալ Բանը, որ Հօր որդին է, անկէ կ'ելլէ, Ս. Կոյսին ծոցը կ'իջնէ, բայց անկէ չ'անջատուիր. կը գտնուի միանդամայն թէ՛ Հօրը քով և թէ՛ Մարիամու ծոցին մէջ:

Ճառագայթը կու գայ կը մտնէ ապակիին մէջ, ինչպէս կը մտնէ չնը գիտեր. բայց կը տեսնենք ակներեւ թէ մտած է առանց զայն խորտակելու, առանց անոր փոքր փաստ մը խոկ հասցնելու: Այսպէս ալ Որդին Աստուած աշխարհ կու գայ, Մարիամու ծոցը կը մտնէ, առանց անոր կուտութեան փաստ հասցնելու: Ինչպէս կ'ըլլայ այս, չենք հասկնաք, բայց հաւատքի աչքով կը տեսնենք թէ եղած է:

Ի՛նչ կ'ըլլայ ճառագայթը տապակին մէջ. — կը գունաւորուի, ապակին կտրմիր երանգ մը կու տայ, ռոնդա Ի՛նչ կ'ըլլայ Որդին Աստուած՝ Մարիամու ծոցին մէջ. — կը մարգանտի: Ս. Կոյսը մեր բնութիւնը անոր կու տայ:

Ո՛վ է պատճառը, հոյրը դռնադռն ճառագայթին. — արեւն է. բայց տրեւ պատճառ չէ անոր գոյնին, ալ լոկ ճառագայթին որ միացած է գոյնին հետ:

ո՞վ է ուրեմն անոր գոյնին պատճառը, մայրը.— ապակին է որ անոր կը հաղորդէ իր գոյնը: Ո՞վ է Քրիստոսի հայրը իբրեւ Աստուած, իբրեւ Որդի Աստուծոյ.— Երկնաւոր Հայրն է որ ծնած է զայն ի յաւիտենից: Ո՞վ է Քրիստոսի մայրը իբրեւ մարդ, իբրեւ որդի մարդոյ.— Ս. Կոյս Մարիամն է, որ Աւետման օրը կու տայ անոր մարդկային բնութիւն: Ո՞վ խելքէ մտքէ վեր խորհուրդ:

Օ՛ն, երկրպագե՛նք այս անճառելի խորհուրդին, որուն փոքրիշատէ խելամուռ ըլլալու ջանացինք՝ Պօղոս Առաքեալին առջեւնին պարզած երեք տեսարանները դիտելով: Նորոգե՛նք մեր հաւատքը այս Ս. Խորհուրդին նկատմամբ: Արժարծե՛նք մեր ջերմեռանդութիւնը աստուածամայրութեան գերհրեշտակային պատուին բարձրացող Ս. Կոյսին հանդէպ: Անջի՛նջ պահէնք մեր մտքին մէջ՝ այս մեծ խորհուրդին յիշատակը, ամէն օր ջերմեռանդութեամբ Հրեշտակ Տեսուեր և Ողորջն քեր ըսելով: Բայց ամէն բանէ աւելի ջանա՛նք ապահովելու մեր հոգւոյն փրկութիւնը, որ է պատճառ այս Ս. Խորհուրդին և ասոր համար Աստուծոյ ձեռք առած բոլոր միջոցներուն:

Ո՛հ, այս Ս. Խորհուրդին մեզի յայտնած ճշմարտութիւնները ի՛նչ սոսկալի կերպով կը դատապարտեն այն անտարբերութիւնը զոր ունինք մեր հոգւոյն փրկութեան գործին մէջ:

Աստուած ինքնին մեր հոգւոյն փրկութեան համար այնչափ հազարաւոր տարիներ կ'աշխատի, մարդոց կ'երեւի, յայտնութիւններ կ'ընէ, ապագան անոնց ցոյց կու տայ. պետութիւններ կը

կանգնէ, կը քանդէ, կը բարձրացնէ, կը խոնարհեցնէ. և կան մարդիկ որ յանձն չեն առնուր, ոչ եթէ քանի մը տարի, ոչ եթէ քանի մը ամիս, ոչ եթէ քանի մը օր, այլ և ոչ իսկ քանի մը ժամ աշխատիլ իրենց խղճին վիճակը կարգադրելու և յաւիտենական երջանկութիւննին ապահովելու համար:

Մեր հոգւոյն փրկութեան համար Որդին Աստուած կը զրկէ ինքզինքը իր անչափ գանձերէն, անհուն հարստութենէն, ու կ'աղքատանայ, մեր տնանկ բնութիւնը կ'առնու. և դեռ կը գրտնուին մարդիկ որ անիրաւութեամբ ձեռք բերած ունայն, փուճ ստացուածքնին՝ օրինաւոր տէրերուն դարձնելու չստիպուելու համար՝ տարիներով ետ կը կենան իրենց հոգին փրկելու միակ միջոցէն, ապաշխարութեան Խորհուրդէն:

Մեր հոգւոյն փրկութեան համար անհուն, ամենակատարեալ, ամենամեծ Աստուածը կը խոնարհի երկինքէն և ամենէն անչափ վիճակ մը կ'առնու. և մենք չատ ծանր կը համարինք խոնարհեցնել մեր գլուխը Աստուծոյ պաշտօնէին առջեւ այս սուրբ օրերուն մէջ:

Հերիք է, հերիք է այսքան թուլութիւն, անխելքութիւն, չարութիւն, յիմարութիւն: Վե՛րջ տանք այլեւս այս հաւատքի և սրամաքանութեան հակառակ ընթացքին: Ձե՛ռք զարնենք նոր կեանքի մը՝ հիմնուած սա ամենաստուգ ճշմարտութեան վրայ, թէ՛ հոգւոյ փրկութեան գործն է մարդու բուն գործը, ամենակարեւոր գործը. ասոր համար ստեղծուեր է մարդ, ասոր համար ստեղծուեր են երկինք և երկիր, ասոր համար մարդացեր է Որդին Աստուծոյ, ասոր համար տեղի կ'ունենան աշխարհիս

ամէն գէպերը: Այս է միայն մեր ջանքին, մեր սիրոյն, մեր մտածումին արժանի գործը: Ուրիշ ամէն բան ոչինչ է. հարստութիւն, փառք, պատիւ, հաճոյք, իշխանութիւն, գեղեցկութիւն, ոյժ, ճարտարութիւն ոչինչ են, և շատ անգամ ոչինչէն ալ գէշ են, վնասակար են, մեզ դժուր կը տանին:

Ելլե՛ք ուրեմն մեզքի թմբիրէն, արթնութեամբ ապրինք քրիստոնէութեան կենսապարգեւ, խաւարահալած արշալոյսը, Բանին Մարգեղութեան ամենագեղալոյս խորհուրդը տեսնելէ յետոյ: Ապրի՛ք այն ճշմարտութեան համեմատ, զոր այս խորհուրդը յայտնեց մեզ, այս է թէ՛ մարդու հոգւոյն փրկութիւնը՝ ամէն բանէ առաջ է, ամէն բանէ վեր է: Ապրի՛ք այսպէս, և վատահ ըլլանք թէ ինչպէս որ Որդին Աստուած երկինքէն երկիր եկաւ և մեզի նման եղաւ, որ մը մենք ալ երկրէս երկինք պիտի երթանք և իրեն պէս երջանիկ պիտի ըլլանք:

ԱՐՁԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱԿԱՆ

ՍԻՒՆ ՀՈՂՈՍ (*)

Այն վաւերագիրները որոնք Սիւնհոգոսի ներքին կազմակերպութեան հետ մերձաւորագոյն ու կարեւոր առնչութիւն ունին, ա՛յն վճիռներն են որոնք կը կանոնաւորեն անոր յօրինուածութիւնը կամ գործարանաւորութիւնը:

Ե. Վճիռք. — Ասոնք պատրիարքական իշխանութեամբ արտոտանուած ներքին կանոններ են, ինչպէս ըսինք, որոնք Սիւնհոգոսին գործառնութիւնները կը կարգադրեն. ու մէնքն ալ պարտք ունին ասոնց հնազանդե-

լու: Վճիռները, առաջարկութեամբ Սիւնհոգոսի Զատագոյին, Հանգիսական Նիստերու մէջ կը հրատարակուին: Առաջին Նիստին մէջ հրատարակուածները 7 հատ են, իսկ վերջին Նիստին մէջ՝ 3:

Ա. Նիստին վճիռները. — 1. Բացման վճիռը, որով Ամեն. Պատրիարքը բացուած կը հռչակէ Սիւնհոգոսը, զոր արդէն կոչած էր՝ 1911 Հոկտ. 15ին համար: — 2. Կը սահմանէ որ ամբողջ Սիւնհոգականները, ըստ հրամայեալ սովորութեան, ի միասին տան՝ ա) այն Հաւատոյ Դաւանութիւնը, զոր Ուրբանոս Ը. Քահանայապետը սահմանած է Արեւելեայց համար. բ) Պիոս Ժ. երջանկայիշատակ Քահանայապետին Արքիսկան ազանդաւորաց դէմ սահմանած դաւանութիւնը: Սիւնհոգոսը իր սահմաններուն մէջ (Թիւք 59, 60, 61, 332) որոշած է թէ որո՞նք ու ե՞րբ կը պարտին այդ դաւանութիւններն տալ և զանցառուաց համար պատիժներ տրամադրած է: — 3. Կրնայ պատահիլ որ անուշադրութեամբ կամ ուրիշ պատճառով մը կանոնական յառաջագահութեան մէջ թերի բան մը տեղի ունեցած ըլլայ Սիւնհոգոսի մէջ. ասոր համար այդ թերութիւնը չի կրնար կանոն ըլլալ, և իրաւունքը արդէն Հռոմէցոյը՝ նոր իրաւունք մը չափած չի սեպուիլ, և զրկուողն ալ իր իրաւունքը ընդ միշտ կորսնցուցած չըլլար. ահա՛ ասոր համար կը տրուի այս երրորդ վճիռը: — 4. Եթէ որեւէ ծանր խորհրդակցութեան մը մէջ սրբազան կանոն ու պարտք է գողանիք պահել անվթար, ո՛րչափ որքաղնագոյն և նուիրականագոյն պէտք է ըլլայ Սիւնհոգոսի մը զաւառնիքը, որ Աստուծոյ ու Ս. Եկեղեցւոյ ամենէն կարեւոր ու սուրբ գործերը կը վճռէ ու կը կարգադրէ: Ուստի այս վճիռը մէջ կը հրամայուի ա) գողանիք պահել նոյն իսկ վիճաբանութեանց վրայ, ընդ ծանր պարտք. և որպէս զի կարելի եղածին չափ ապագայի մէջ ալ նոյնը պահուի՝ մինչեւ ցողաշոտնական հրատարակութիւն, առ նախազգուշութիւն կը հրամայուի՝ բ) որ սիւնհոգական գործերը որոնք ամենուն բաժնուած են յուսումնասիրութիւն, Սիւնհոգ լինելու պէս

(*) Տես Թիւ 183. էջ 52.

անմիջապէս ետ դարձուին առ Զատագովն, և ոչ ոք կարող ըլլայ անոնցմէ պահել օրինակ մը: — 5. Այս վճիռը կը սահմանէ՝ ա) Մասնաժողովներ, որոնց առաջինն է Դասաւորացը, որոնք կ'ընդունին Սինոդոսի ժամանակ հնարաւոր դիմումները՝ իրաւանց, վեճերու, օրինական որեւիցէ որոշողութիւններու համար, և իրենց վճիռը կու տան անոնց վրայ. իսկ միւսերը կը զբաղին սինոդական գործոց իրենց յանձնուած մասին նախնական քննութեամբ, որպէս զի կարող ըլլան Համագումար ժողովներու մէջ իրենց պատրաստած դիմողութիւնները բերելով զիւրացնել ընդհանուր բանակցութիւնը՝ առանց ժամավաճառ ըլլալու: բ) Կ'որոշուին նաև Սինոդոսի պաշտօնեայք, որոնք են՝ Զատագով, Նօտարք, Քարտուղարք, Ընթերցող, Արարողապետ և Դռնապան: Տե՛ս Սիւնհ. թիւ 230 ասոնց պաշտօններուն մանրամասնութիւնը: — 6. Վեցերորդ վճռով կը յանձնարարուի ա՛յսքան մեծ գործի մը համար, ինչպէս է Սինոդոսը, ջերմեռանդ աղօթքով դիմել առ Աստուած, և ժամանակը լաւ գործածել, որու համար ժամանակացոյց տալու տակ մը ևս կը կցուի ամէն գործառնութեանց համար: 7. Վերջապէս կը վճռուի թէ ոչ ոք պէտք է մեկնի Սինոդոսէն առանց հրամանի Ամեն. Պատրիարքին, որ յառաջ բերուած պատճառը կշռելով, եթէ բաւական դա՛նէ, կրնայ չնորհել խնդրուած թոյլտուութիւնը:

Է. Նսփն վճիռները: — 1. Սինոդոսին գործերն ու սահմանները ստորադրելու համար: 2. Յաջորդ ազգային պատրիարքական Սինոդոսին ժամանակը որոշելու համար, որ, յաջողելով Տեառն, պիտի գումարուի 1921ին: — 3. Սինոդոսը վերջացնելու վճիռ:

Զ. Վերոյիշեալ երկու դաւանութեանց օրինակները կը դրուին:

* *

2. ԴՈՐՄԲ ՍԻՒՆՀՈՂՈՍԻ:

1. Նախապատրաստական չորս նիստերու մէջ Սիւնհոդոսի կարգաւորութեան, սինոդական Հարց և նոր օծուելիք Եպիսկոպոսաց, կարգուելիք սինոդական աստուածաբաններու վրայ որոշողութիւններ առնուեցան: Այս

նիստերը Լեւոնեան Դպրոցի մեծ սրահին մէջ դումարուեցան: — Աստուածաբանները, ամէնն ալ ընտրուած գիտնականք, իբր խորհրդակից՝ պաշտօն ունէին քննելու Սինոդոսին մէջ դրուելիք խնդիրները. բայց իրենք Սինոդոսի գումարումներուն ներկայ չէին ըլլար բնաւ:

2. Համագումար նիստեր: Այս նիստերը, որոնց թիւը հասաւ մինչեւ 37, մեծ կարեւորութիւն ունէին, որովհետեւ Հարք անոնց մէջ մաս առ մաս կը վիճէին Տիտղոսներու բովանդակած նիւթերուն վրայ. վիճաբանութեանց աւարտելուն, Զատագովը Հարց կարծիքը ժողովելով արձանագրել կու տար քարտուղարներուն, որոնք Սինոդոսին արձանագրութիւնները կը բռնէին, և՛ կա՛մ համաձայնութեամբ կա՛մ առաւելութեամբ ձայններու, խնդիրը կ'որոշուէր, յետոյ վճռուելու համար հանդիսական նիստերու մէջ: Նօտարները համագումար և հանդիսական նիստերու պատկանելի կ'արձանագրէին: Սրգման վճիռն և ուրիշ քանի մը վճիռներ այդ նիստերու մէջ հրատարակուեցան:

3. Հանդիսական նիստեր: — Սինոդոսի ամենէն էական մասը կը կազմեն այս նիստերը, որովհետեւ անոնց մէջ կը վճռուին Սինոդոսի որոշողութիւնները: Անոնց թիւը եօթը եղած է: Կը սկսին հանդիսաւոր ձայնաւորով, մասնաւոր պաշտօնաւորներով և պատշաճ քարոզութեամբ: Եկեղեցւոյն մէջտեղ շուրջանակի կը բաղմին Հարք՝ հայրապետական զգեստուք. և եկեղեցին կը պարպուի ժողովրդենէն: Պաշտօնական վաւերաթուղթերը կարդացուեցան Ա. նիստին մէջ. եւ Դահերէցը խօսեցաւ իր ճառը. ապա Ս. Քահանայապետին հեռագիր շնորհակալութեան քաջուեցաւ, որուն պատասխանը անմիջապէս եկաւ:

Այդ նիստերուն մէջ Զատագովին առաջարկութեամբ պատկանեալ վճիռները հրամանաւ Պատրիարքին կը հրատարակուին. վճռուելիք Տիտղոսները կը կարդացուին. Հարց հաճութիւնը առնուելով, վճռուած կը հրատարակուին Ամեն. Պատրիարքէն: Նիստերու աւարտումէն վերջը թափօրով կը մեկ-

նին յաւանդատուն : — Եօթներորդ Նիսոր հանդիսաւորագոյնն է . անոր մէջ ստորագրուեցան Վճիռները կամ Տիտղոսները , որոնք կը կազմեն Սինոդոսին մարմինը , և փակուեցաւ Սինոդոսը հրատարակելով ապագայ Սինոդոսի վճիռը :

Հանդիսական փակուելի և թարեմալարական աղօթից արարողութեամբ աւարտեցաւ Սինոդոսը :

ԿԱՐԱՊԵՏԵԱՆ Վ. ՌԻՍԿԻՑ ԿԸ ԲԱՂԷ ԻՐ ԳՐԱԾՆԵՐԸ

Այս վարդապետը երրորդ յօդուածով մը (Բիդ. 5591) ներկայութեան (immanence) սկզբունքին կը թափէ իր տեսութիւնները , և անով զԱստուած իրական աշխարհէն վտարելէ ետքը կը փակէ իրաց ու մարդոց ներսերը՝ տալով անոր ո՛չ անձնական այլ երեւային-հոգեկան (?) ներկայութիւն մը : Աստուծոյ անձնական հայրութիւնը եւ անոր գոյացութիւնը ըլլալը՝ անշուշտ չեղան ևրձար հայեցողութիւն իրարմ հետ : Հոս է որ կը սպասէինք իրեն՝ երբ կ'ազնաւորէինք նախընթաց յօդուածով թէ նա պէտք է որ հասնի այն եղբակացութեան թէ՛ մարդն է որ գիտնուած անհոգի է եւ ոչ թէ Աստուած գիտալը : Եւ իրօք ինքը բնականաբար իրաւունք կու տայ ամէն դարու փորձելու և կողապարելու ինքնիրեն համար Աստուծոյ առանձին բանաձեւում մը : Եւ այսպէս ինքն ալ զԱստուած իրական ուշխարհէ զուրս ենթադրելէ ետքը , Հրէից Եհովան աղայլում մը նկատեց Աստուծոյ դադարիւրին , զոր Քրիստոս իր ձեւովը բարեփոխեց և Քրիստոսին ալ առաքեալը ու յետագայ դարեր յեղաշրջեցին մինչեւ եկաւ աստուածաբանութեան զրուծիւնը : Եթէ Քրիստոսի ողին առաջին օրէն տրուեցաւ առաքելներու փառքութեան մէջ չեղան իւրացողութիւնը եւ գոյութեան չեղան զարմաւ անեղ զրուծիւնը փրօնեկական աստուածաբանութեան : Նոյն ոճով կը շարունակէ չորրորդ յօդուածի մը մէջ իրերը աստուածացնելով և անոր տա-

լով ստեղծագործութեան զօրութիւնը՝ Կենդանի Աստուծոյ տիտղոսին տակ :

* *

Երկարօրէն պիտի չպատասխանենք իրեն՝ վասն զի չ'արժեք . իր դրած մոլորութիւնները հերքուած են արդէն նոյն իսկ իրենց ակնադիւրբին մէջ ուսկից ինքը կը քաղէ : Բաւական է ուրեմն իր կոյր հետեւողութեան գծերը նշաւակել :

Կը հարցնենք սակայն , ամէն բանէ առաջ , ինչո՞ւ արդեօք աստուածաբանութիւնը շարիւրսնորս մը , անեղ զրուծիւն մը անուանած տառն , ուրիշ աստուածաբանութիւն մը կը ստեղծէ . ինչո՞ւ կը դժկամակի , երբ իրականութեան վրայ հիմնուած փիլիսոփայութիւն մը և դայն ծառայեցնող բանաւոր աստուածաբանութիւն մը՝ բանաւոր կը ներկայացնեն զԱստուած ու անոր յարակից ամէն հարցիւր . ինչո՞ւ համար ընդհակառակն Արքիսպաշտներու մտակորոյս քաջքնութեան մը կը շարագրէ : Զ'ախորժիր արդեօք որ կրօնք , Աստուած , հաւատք և ասոնց մասին ճշմարտութիւններ փաստացի և հիմնեալ ըլլան . կամ կը ցաւի որ անոնք զուտ զգացողական (sentimental) տնդիտակից մտքերու հանելուկներ ըլլալէ դադրին : Հնար չէ որ կարենայ պատասխանել առանց հակասելու . վասն զի խօսելու պէտք չ'զգացողը՝ խօսելու չէ և աստուածաբանելու դէմ ելլողը աստուածաբանելու չէ :

Բայց ունի փախուսական պոտտոխան մը , որ ամէն կամակոր հակասողներու միակ վահանն է , կ'ուզեմ ուզածս , չեմ ուզեր չ'ուզածս , կը մերժեմ աստուածաբանութիւնը՝ անոր տեղ դնելու համար իմինս . կ'ուրանամ Աստուածը՝ անոր տեղ եթերային աստուածը թաղաւորեցնելու համար : Ուստի զուտ կամայականութեան խնդիր է և ոչ մասցիօնութեան . sit pro ratione voluntas :

* *

Ուսկից կը քաղէ իր վարդապետութիւնը . Արքիսպաշտից (moderniste կամ néorationaliste) զրուծիւնէն , որուն հիմը կը կազմեն . 1. Ազնոսարկութիւն , 2. Ներքնագոյութիւն

(immanentisme) և 3. Յեղաշրջումի մուտքութիւնները որոնք մարդու միտքն ու անոր ծնունդը եղող գիտութիւնը կ'անպատուեն, կ'անճոռնիացնեն, ինչ չ'ըլլար կրօնքը երբ անոր մերձեցումին այս սկզբունքները. կը հետեւին այն ամէն սխալ ենթադրութիւնները, որոնք որքան մանուածապատ, նոյնքան սիրուած են անոնցմէ, որ զիտումունին անել ցանցերու մէջ խեղդելու քրիստոնէական պարզ, զրակուն և միանգամայն բաւարար ու վսեմ հաւատքն ու վարդապետութիւնը, Կարապետ Վ. Քանդի. Սիինողայի, Շլալըրմախէրի հետեւելով կը հայացնէ անոնց կրօնամարտ մտածութիւնները. կը լսենք թէ բարձրացումի խոստումներ ունի եղեր. Loisyի դպրոցէն կրնայ Արծանի ե երգողներու խումը մը հրաւիրել:

* *

Ինչ է Ազնոտիկութիւն և ինչպէս կը մերձեցուի կրօնքին, Արդիականներու կողմէ, Դիտնալու է նախ որ գալոցական փիլիսոփայութեան և անոր հետ հաշտ աստուածաբանութեան հիմնեալ և զօրեղ դրութիւնը, որ ցոյց տալանոված է կրօնքը՝ քմահաճ եւ յանդուգն ձեռնմխութեանց դէմ, չէր կրնար ճակատամարտի յենակէտ մը ըլլալ անոնց որ կրօնքը իրականութենէ՝ դուրս ձգելու ցնորքը ունեցած են: Ուստի զանոնք իբրեւ մտքի բանաստեղծութիւն, լարիւրինդաւ և անել դրութիւն մերժելու էին. բայց երկուքն ալ իրականութեան վրայ հիմնուած էին և իրաց ճանաչելիութեան վրայ, ուստի հարկ էր նոյն իսկ իրականութիւնը և իրաց ճանաչելիութիւնն ալ տեսականօրէն ուրանալ, թողով մտքին հազիւ փորձառականութեան ծերպ մը, ուսկից նա կարենար նայիլ իրաց վրայ, ճանչնալ զանոնք ու ըմբռնել: Այսպէս ճանաչողութեան միակ յենակէտ փորձառականութիւնը կ'ըլլայ. սա ալ բնականաբար կը կը յածի միայն բնեղեւութից շուրջ (phénomène) և ոչ բնութեան կամ իրականութեան (noumène), որ կը մնայ անճանօթ ու անմատչելի: Ահա մտքի դէմ արտաքուստ դրուած պատուարը. Ներքուստ ալ ենթադրելու է՝ կ'ըսեն, նոյն պատնէշը, քանի որ ներ-

քին զգացումներն ալ զուտ բնեղեւութներ են: Միայն այսպէս երկուստեք Անճանօթի փակարանին մէջ խղզուած Անաքսագորասի հետ պէտք է պօռայ. Մութ է չորս կողմերնիս: Այս մթութիւնը կ'ըսուի Ազնոտիկութիւն, որ մտքի զատապարտութիւնն է հեղձամուղձ ըլլալու: Անճանօթի մթնոլորտին մէջ ամէն գաղափար կ'ըլլայ անճանօթ, ինչպէս մութին մէջ ամէն բան մթագոյն է: Ուստի զարմանալու չէ որ մեր վարդապետը առաջին յօդուածէն իսկ զԱստուած որակած ըլլայ Անճանօթ:

* *

Ազնոտիկութիւնը Արդիապաշտներու ռաւան լոկ ժխտական մասը նկատուի ե. դրական մասը կազմուած է, իրենց խօսքին համաձայն, կենսական ինքնագոյութեան մեջ (immanence vitale): Բայց ասանցմէ մին միւսին տուաչ կու գայ եւ անա ինչպէս. կրօնքը թէ՛ բնական ըլլայ, թէ՛ բնութենէ վեր, ուրիշ տեւէ դիպուածի պէս հարկ է որ մեկնութիւն մը վերցնէ: Արդ բնական աստուածաբանութիւնը ջնջելով եւ հաւաստի փաստերու ուրացման փակելով ամեն անցի դէպի յայննութիւն, մանաւանդ ամեն արտաքին յայննութիւն մեկդի դնելով, պարսպ սեղ մեքեն յուրս կը փնտռուի այդ մեկնութիւնը: Վասն զի, կ'ըսեն, հաւատքը ներքին զգացումն է որ կը մղէ առ Անճանօթը, երբ այդ զգացումը զօրեղ ու կենդանի գոյներով պատկերացնէ, Անճանօթ աստուծայինը յայննութիւն (révélation) կ'ըսուի: Ուստի հարկ կ'ըլլայ մարդուն մեջ փնտել կրօնի մեկնութիւնը, եւ որովհետեւ կրօնքը կեանքի մեկ ձեւն է, մարդու կենացը մեջ զտնելու է զայն: Ահա այս սկզբունքով կը ստեղծուի կրօնական ինքնագոյութիւնը (Pascendi Պիոս Ժ.): Այս հիման վրայ աստուածայնոյ գաղափարը, որ Արդիապաշտներու լեզուով Աստուած ինքն է, մարդու զգացումին մէջ կը ծնանի և կը մնայ, և երբ այդ զգացումի փորձառութիւնը կը ստանայ մէկը, այն ասին սնով կ'ապրի և կ'ըլլայ հաւատապիտ:

Ասով՝ որքան ալ մեր վարդապետը որոյ զանազանութիւն մը եկրադէր համայնաստուածութեան եւ ներմագոյութեան միջեւ, անխու-

ստիկիորէն սակայն ստիպուած է հակասելու իրեն և չարականցելով վերջինը՝ առաջինին մէջ իյնալու հ: Անոր համար ալ կ'ըսէ. մարդկային գիտականութեան մէջ Աստուծոյ ներկայութիւնը տեսնելի ետքը՝ տրամաբանական չէ արդէն ներքին զբանայ աստուածայնութեան ստորագելիքը: Եւ այս ծայրայեղութեան կը յանդի իր Կենդանի Աստուածը յօդուածին մէջ, ուր՝ եթերին կը յատկացնէ աստուածային ստեղծագործութեան ոյժ:

* *

Ներքնագոյութեամբ՝ քանի որ մութը կը ստեղծուի ամէն կողմ, հարկ է որ ամէն կրօնք, ամէն պործ, ամէն գաղափար, նոյնանայ. միեւնոյն գոյնով ստուերոտի. *nox erat et rebus color unus erat*: Կրօնքի խորութեան, գործի բարոյականութեան, գաղափարի ճշգրիտութեան խորտուրոտն ակնախուսափ կը մնայ ինչպէս մութին մէջ լեռան անհարթութիւնը: Սխալ չկայ, ինչպէս ճշմարիտ չկայ. չկայ չար, վառն գիբարին ալ բացարձակօրէն չկայ: Այսպէսով ներկայացող Աստուածը կը արագօրէն մեր թիւր ընթանումը աշխարհի ետեւ շարժման մասին եւ շարժմանը կը տարբերէ զանազան ժամանակի բոլոր տեսողութեան հսկողքը:

Մանաւանդ թեր ու զէմ կարծիքները՝ միեւնոյն գաղափարին զանազան բացատրութիւնները նկատելու է, որոնք իւրաքանչիւր մտքի տուած ձեւին համաձայն կը բոլորեն ու կը յեղաշրջեն նախնական զգացումը Անձանութին: Այս շրջումով կը բացատրեն Արդիապաշտք Աստուծոյ մասին այլեւայլ գաղափարները, և չփոխելով ենթակայական գաղափարը Աստուծոյ ինքնութեան հետ, զայս ալ խաղաղիկ մը կ'ընեն մտքի խեղկատակութեանց: Նոյն հիման վրայ Կարապետ Վ.ին ալ Երրայեցւոյ Ենովան Բրիտանիոյ Աստուածէն տարբեր, և Լօղօսի վարդապետութեամբ յեղաշրջուած կը նկատէ: Դո՛նէ խիղճը ունենար Ենովայի Որ էնական իմաստով զԱստուած ճանչնալու, պիտի հանդիպէր անշուշտ Աստուծոյ ինքնագոյ պարզութեան, որ ամէն կատարելութիւն կը բովանդակէ և կը ճառագայթէ. պիտի տեսնէր այն ատեն

նոյն Ենովայի գերազանցօրէն մտացի ճառագայթումին մէջ Լոյս Բանն-Լօղօսը, որ պատկեր է բնութեանկից Աստուծոյ և Աստուած, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ, և որմէ զուրա ոչինչ է և խաւար: Ասոր առջեւ Կարապետեան Վ. բաւական խորհելիք ունի: Այնտարիկութեան մաքր, ներքնագոյութեան զննանը, յեղաշրջումի ցնորքը: Անձանութը ալ աւելի անձանութ մնալու կը մասնեն, անոր հետ թաղելով հետեւողներու միտքն ալ: Զի որ գնայ ի խաւարի՝ ո՛չ գիտէ յո՛ւ երթայ:

Պ Ի Ո Ս Ժ. (*)

(Շար.)

Լեւոն ԺԳ.ին սուր աչքը Կարգինալ Սարգոյին առաքինութեանց հետ միասին ճանչցած էր նաեւ թէ անիկայ կոչուած էր բազմեւու Ս. Պետրոսի Աթոռին վրայ. և կը պատմուի թէ Կարգինալին այցելութիւններուն տանք զայս իրեն նախագուշակած էր: Զանի կ'անուանէր Վեհապառն Կենեակոյ ընտելին: Իրենց ունեցած վերջին տեսակցութեան մէջ անոր խօսեցաւ իր մահուանը վրայ զոր կը նախագագոր, և արժանաւոր յաջորդ մը ունենալու յոյսին վրայ եւս, և կը յաւելուր կարծես բացարձակ ներշնչումով. «Եւ հնար է թէ Դուք յաջորդէք Մեզի», Եւ որովհետեւ Կարգինալը յապուշ կրթելով սոփապիտի ոճէ մը, ինքզինքը անկարող կը յայտարարէր, «Քահանայապետը շարունակեց. Շրիտենք, սիրելի՛ որդեակ, որ Դուք պիտի կարենալիք մեծ ծառայութիւններ մատուցանել Ս. Եկեղեցւոյ, որովհետեւ աջակիտի բարեմասնութիւններ ունիք, որոնք զՁեզ թանկագին պիտի հանդիսացնեն Անոր»: Երբ Լեւոն ԺԳ. Քահանայապետական Սրողինա-Մատրան մեծ Դպրապետ անուանեց Տօն Բեթօլին, Վեհեակոյ քահանան՝ աշխարհահռչակ մեծ երաժշտապետ վարպետը, անոր դիրքը ճշգրէն վերջը աւելցուց. «Եթէ քու պատ-

(*) Տե՛ս ԹԻԼ 483, 49 55:

րիարքդ Քահանայապետ ըլլայ, մնացածը կարգի կը դնէ»։

Մեծին Լեւոն ժ. Գ. ի մահուան, Կարգ. Յովսէփ Սարգո 27 Յուլիս 1913ին հասաւ ի Հոռոմ, երթուղարձի (aller-retour) տոմար կողմը, ա՛յնքան վստահ էր որ պիտի վերադառնար ի Վենետիկ, իր պատկառազրու դէմքը տեսնողներէն ոմանք կ'ընէին թէ շատ մեծազնայեղուչ Քահանայապետ մը պիտի կրնար ըլլալ, Սակայն և այնպէս իր ընտրելութեանը վրայ չէր խօսուեր, շատ շատ իբր «պահեստի ընտրելի» կը նկատուէր, Շատ անգամ սակայն այսպիսիներն են որ կ'ընտրուին ինչպէս եղաւ նաեւ Բենեդիկտոս ԺԵ. ի ընտրութեան մէջ, Դադլիտցի կարգինալ մը ըսած էր Կարգ. Սարգոյի. — «Եթէ գաղղիներէն չէք գիտեր, չէք կրնար Պապ ըլլալ»։ «Փառք Աստուծոյ», պատասխանած էր Սարգո։

Քահանայապետական ընտրութեան գաղտնի ժողովին մէջ, ինչպէս կարելի է գիտ կը յիշեն շատեր, ընդհանուր համարումը ընտրողներուն՝ հակած էր դէպի կարգ. Ռամբօլլա, սրբակեաց և հոնճարաշատ պաշտօնեալ Լեւոն ժ. Գ. և իր ընտրութիւնը յաջողելու վրայ էր, երբ Աւստրիոյ կողմէ եղած դիտողութիւնը ամէն կարգինալներու բողոքին արժանանալով հանդերձ, յոռաջ բերաւ նաեւ կարգ. Ռամբօլլայի ինքնակամ ու վսեմ հրաժարումը՝ Ս. Եկեղեցւոյ մեծագոյն բարեոյն համար։ Առաջին քուէհամարին մէջ կարգ. Սարգո 62 ընտրողներու վրայ մրայն 5 քուէ չահած էր։ Ընտրական դործողութիւնը ետեւէ ետեւ եօթը անգամ կատարուեցաւ. ամէն անգամուն Սարգոյի սրուած քուէներուն թիւը կ'աւելնար, իրեն համար առջի բերան կ'աշխատէր միայն կարգ. Սաղօլի, զերաւ հաշակ աստուածաբանը և Լեւոն ժ. Գ. ամենասիրելի ձեռնասուները. բայց տպա սկսան անոր ընտրութիւնը մղելու նաեւ կարգ. Ֆէրրարի և կարգ. Ալեարտի։

Այն միջոցին սակայն խռոված կ'աշխատէր Սարգոյի հոգին, և՛ իր նախորդը Լեւոն ժ. Գ. պէս, երկու գիշեր անքուն անցուց։ Գիւղի խոնարհ զաւակը կը կարծէր թէ պիտի կքի ընկճի այս պատուական բեռան ներքեւ, ու

հոգին կը լեցուէր անպատմելի դառնութեամբ։ Երբ քուէներու թիւը սկսաւ երթալով բարձրանալ, կարգ. Սարգո միտքը դրաւ հրաժարակել իր հրաժարականը. սակայն վերոյիշեալ երեք կարգինալները ածապարեցին զինքը համոզելու թէ պարտք ունէր ընդունելու։ «Եթէ կ'ուզէք վերադարձէք ի Վենետիկ, — ըսաւ Ֆէրրարի, — բայց հոն պիտի երթաք խղճի կարեվէր խօյթերով, ուրնք յիմա՛ պիտի տանջեն հալածեն յիշեց»։ Պատասխանատուութիւնը ահագին է, կ'ըսէր Սարգո, և բարեկամը կը կրկնէր թէ հրաժարականի պատասխանատուութիւնը աւելի մեծ է։ Առողջութեան սկզբութիւնն ալ վրայ կը բերէր Սարգո, և կ'ըսէր թէ անշուշտ կը մեռնի. և Միլանու կարգինալը ժպտելով ըսաւ. «Կայիափայի ոճը յիշեցէք. լաւ է որ մէկը մեռնի ամենուն փրկութեանը համար»։

Դունատ, դողահար, յարտասուս ցնդելով ողջակէզի սահմանուած գառնուկի մը պէս, ամէն մէկ քուէհամարին յանուն Աստուծոյ կ'երգուընցնէր ընկերակից կարգինալները, որպէս զի հաճին դադրիլ իրեն քուէ տալէն, անոր համար որ ինքը բոլորովին անարժան է, «Եւ ճիշդ իր վրայ ունեցած այս խոնարհ զգացումը, — կը պատմէր Գոլոնիայի Արք. Կարգ. Ֆիշեր, — ընտրողներուն աչաց արժանաւորապոյն յոյց տուաւ զինքը Փոխանորդ ըլլալու Անոր՝ որ մեզի համար խոնարհեցուց ինքզինքը, մինչեւ իսկ մեզի ծառայ ըլլալու, և անանկով իր ներկայացուցիչներուն մոտանալեց այն ճամբան զոր անոնք պէտք է քալեն եթէ կ'ուզեն իրեն նմանիլ»։ Նոյնպէս ամերիկացի Կարգ. Կիպպընս յայտարարեց. «Իր այս պաշտօնականքները լի խոնարհութեամբ և իմաստութեամբ, պատճառ եղան ժողովին առ ինքն ունեցած համարումը կրկնապատկելու։ Իր այս խօսքերէն կրցանք աւելի ևս դատել զինքը, քան իրեն վրայ պատմութեաներէն»։ Բարեկամ Միլանաւորք ալ կ'աղաչէին իրեն որ յանձնուի այլեւս Աստուծոյ սուրբ կամքին։ Վերջին քուէհամարին մէջ 50 քուէով ընտրուեցաւ Քահանայապետ։

Անպատմելի կերպով խռոված էր Կարգ.

Սարգո, երբ Գամէրլէնի կարգ. Օրելիա հա-
ղորդեց ժողովին թէ Ս. Պետրոսի շնորհ Յա-
ջորդը ընտրուած և Եկեղեցին ունեցած էր
իր պետը. կարգ. Սարգո Ս. Սեղանին առ-
ջեւ գետին ինկած էր լալով, երբ կարգ. Օ-
րելիա եկաւ, ըստ արարողութեան, և իրեն
հարցուց. «Կ'ընդունի՞ս կանոնապէս կատար-
ուած քահանայապետական ընտրութիւնդ»,
վեր վերցուց արտասուածքով աչքերն ու
մրմնջեց Փրկչին նման. Եթէ չկայ հնաւ այս
բաժակին ինծեմե անցներուն, ըզրա՛յ Աստուծոյ
կամօր:

ԿԱՐԴԻՆԱԼ ՆԻՒՄԸՆ

ԳԵՐՈՆՏԻՈՍԻ ԵՐԱԶՐ.

Գ.

ՀՈԳԻՆ

Իրեն պիտի դիմեմ. Հզօր հոգի, Տէ՛ր իմ,
պահապան Հրեշտակ իմ, ողջո՛յն:

ՀՐԵՇՏԱԿԸ

Ողջո՛յն, որդեա՛կ իմ. Որդեա՛կ իմ և եղ-
բայր, ողջո՛յն. Ի՞նչ կ'ուզես:

ՀՈԳԻՆ

Կ'ուզեմ քեզի հետ գիտակցական հաղոր-
դութեան մը մէջ մտնել. Հետք խօսիլ միայն
կը փափաքեմ, թէեւ բաղձալի էր ինձ շատ
մը բաներ գիտնալ, սակայն եթէ պատշաճ է:

ՀՐԵՇՏԱԿԸ

Այժմ չես կրնար տաժել փափաք մը, որ
թրինաւոր չըլլայ:

ՀՈԳԻՆ

Այն ատեն պիտի խօսիմ. Ես միշտ հա-
ւատացնր էի թէ հոգին իր մահկանացու
պատեանը լքելուն պէս կը գտնուի իր պաշ-
տեչի Աստուծոյն առջեւ, որպէս զի դատ-
ուի, իր յատուկ տեղը որդուի: Հիմայ ի՞նչ
կ'արգելէ զիս Տիրոջ առջեւը ելլելէ:

ՀՐԵՇՏԱԿԸ

Բան մը քեզ չ'արգելեր. Դուն ամենալեւ
արագութեամբ կ'երթաս դէպի Արդար և
Սուրբ Դատաւորը. իրօք, դեռ նոր անջատ-
ուեցար մարմնէդ:

Բաժնէ՛, մարդկային եղանակաւ, մէկ րո-
պէն՝ միլիոնաւոր մասերու. բաժնէ՛ այս մա-
սերէն մէկը միլիոններու. բաժնէ՛ դարձեալ
այս վերջին միլիոներոյ մասերէն մէկը մի-
լիոններու. արդ այս յետին միլիոներոյներէն
նուազ ժամանակէ մը ի վեր է որ դուն մարմ-
նէդ անջատուեր ես, և քահանայն ճշմե-
ցէ՛քքը արտասանած է, և աղօթելու համար
ծնրագրած են. Հաղիւ սկսած են աղօթքի:
Վասն զի հոգիները և մարդիկ իրարմէ տար-
բեր հաշիւներով կը չափեն ժամանակը: Մար-
դիկ ժամերը հաւասար և անընդհատ մասե-
րու կը բաժնեն, իրենց հասարակ գործա-
ծութեան համար, ըստ շարժման արեւու
և լուսնի, — ըստ նախնական կարգադրու-
թեանց, — ըստ ներդաշնակ եւթին և մուտ-
քին աստղերու, — ըստ եղանակներու, որ
կ'անցնին և կը դառնան, և ըստ կանոնաւոր
շարժման ժամացոյցներու:

Մեր աննիւթական աշխարհին մէջ նոյն-
պէս չ'ըլլար. Հոս իրարու յաջորդող միջոց-
նէրը մի միայն ապրող խորհուրդով կը չափ-
ուին, և կ'աճին կամ նուազին նոյն խոր-
հուրդին ստատկութեան աստիճանին համե-
մատ: Հոս ժամանակը հանրական յատկու-
թիւն մը չէ, այլ երկայնը կարճ է և կարճը
երկայն է, և մօտաւորը հեռու է, այս կամ
այն հոգիէն ընդունուած կամ ըմբռնուած ըլ-
լալուն համաձայն: Այսպէս իւրաքանչիւր ոք
ինք իր ժամանակաչափն է. Հոս, յիշողու-
թիւնը չունի այն քնական յենակէաները որ
աշխարհի վրայ մարդկային յիշողութեան
տրուած են, որ են տարիները, դարերը, շրջ-
ջանները:

Ի՞նչ մտածումիդ ուժգնութիւնն իսկ է որ
քեզ Աստուծմէ հեռու կը բռնէ:

ՀՈԳԻՆ

Միտի՛ Հրեշտակ, ըսէ՛ ինծի, ինչո՞ւ հա-
մար այլեւս չեմ վախնար սնոր առջեւը ել-
լելէ: Իմ մահկանացու կեանքիս մէջ, մահ-
ուան և դատաւորանին մտածումը ինծի հա-
մար ամէն բանէ աւելի սոսկալի էր: Միշտ
աչքիս առջեւ ունէի դայն, և Դատաւորը՝
նոյն իսկ խաչին վրայ ինծի խիստ կ'երեւար:
Հիմայ որ ժամանակը հասած է, այս վախը

այլեւս պոյութիւն չունի . և այս պահուն ,
ուր իմ վիճակս պիտի որոշուի , կրնամ ամի-
նէն անապակ ուրախութեամբ առջեւ հայել :

ՀՐԵՇՏԱԿԸ

Այն տղեն վախճած ըլլալով . և համար է
որ այժմ չես վախճար : Դուն կանխաւ կրե-
ցիր հոգեւորքի ազնայր , այնպէս որ քեզի
համար մահուան դառնութիւնը անցած է :
Բու հոգեւոր մէջ դատաստանը սկսած է :

Վերջին ընդհանրական դատաստանը իւ-
րաքանչիւր մարդու համար կանխաւ տեղի
կ'ունենայ առանձնական դատաստանով : Այս-
պէս քեզի համար ալ այժմ առանձնական
դատաստանը կանխաւ կը կատարուի , և իր-
եւ թէ Դատաւորին մէկ ճառագայթը կը
լուսաւորէ քեզ՝ իր տիտոն մօտենալէդ ա-
ռաջ : Ինքը միաքի կը լուսաւորէ քու վի-
ճակիդ մասին :

Այն հանդարտութիւնը և ուրախութիւնը
որ կը զգաս քու վարձատրութեանդ սկզբնա-
ւորութիւնն են , — քեզի համար Նրկինքը
սկսած է :

Թարգմանեց ԱՐՁԱՆ

(Շարունակիլի)

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀԱՌՈՒ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ . — Օսեր-
վարտի Բօնանոյ կը գրէ . — Ս . Քահանայա-
ւոր մօտեմաբար խնդրեց պատերազմիկ պե-
տութիւններէն որ քաղաքային գերիներու
քանի մը դատակարգելու ալ թոյլ տրուի ի-
րենց երկիրները դառնալ : Ն . Սրբութիւնը
այս խնդրանքին առթիւ քանի մը նպատա-
ւոր պատասխաններ ստացաւ : Այսու հան-
դերձ այս մասին դժուարութիւններ ծագե-
ցան Անգլիոյ և Գերմանիոյ միջեւ : Անգլիա
հաւանեցաւ արձակել այն գերիները , որոնք
55 տարին անցուցած են , մինչ Գերմանիա
կը պնդէ որ 45 տարեկանները արձակուին :
Անգլ . կառավարութիւնը Ս . Քահանայապե-
տէն խնդրեց միջամտել Գերմանիոյ մօտ , որ-
պէս զի ընդունի անգլ . առաջարկը : Ս . Քա-
հանայապետը ըստ այսմ խնդրեց Գերմանիա-

յէն որ հաւանի գերիներուն փոխանակման ,
առանց պնդելու իր առաջարկած տարիքի
սահմանին վրայ : (Կ . Գ .) :

* * Մարտ 19ին Հռոմի մէջ կնքեց իր
83ամեայ բազմադիւն կեանքը Վանմաշուք
Ս . Կարդինայ Ալիարտի , Հռոմէական Ս . Ե-
կեղեցւոյ Ատենագրիւրը :

* * Պերլինէն կը հետազոտուի թէ Նորս
Տալէի Աշխեսայեհ Չայքունկ կը ծանուցանէ որ
չէզոք տէրութեան մը միջոցաւ գերման եւ
ռուս կառավարութիւններուն միջեւ կատար-
ուած բանակցութիւնները զինուորական ծա-
ռայութեան անընդունակ քաղաքացիներուն
փոխանակման մասին , վերջացան : 17—45
տարու բոլոր գերմանահպատակները , որոնք
բանակին մէջ ծառայելու անընդունակ են ,
կամ հիւանդութեանց եւ կամ ֆիզիքական
թերութեանց պատճառաւ , կրնան մեկնիլ
Ռուսիայէն : Նմանապէս կրնան մեկնիլ բա-
նակին չպատկանող բժիշկներն ու կրօնաւոր-
ները : (Կ . Գ .) :

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ . —
Ուրախութեամբ կ'աւետենք որ օսմանեան
բարեխնամ Կառավարութիւնը Մերխասադու-
թեան Պերաքները շնորհեց Մարաշու , Մար-
աինու , Կարնոյ , Մուշի , Անկիւրիոյ , Կեսա-
րիոյ և Ալիքսանդրիոյ եպիսկոպոսներուն :

* * Մարտ 21ին , կանխաւ որոշուածին հա-
մեմատ , խաղաղութեան համար աղօթքներ
մատուցուեցան ամէն եկեղեցիներու մէջ , ի
ներկայութեան իրենց բազմութեան : Ա-
թոռանիստ Աստուածածին եկեղեցւոյ մէջ
չատ չքեղ եղան նոյն օրուան արարողու-
թիւնները : Առաւօտը խմբովին հաղորդուե-
ցան նոյն եկեղեցւոյ մէջ տրուած ութօր-
եայ հոգեւոր կրթութեան մասնակցող ստուա-
րաթիւ հաւատացեալներ : Իրիկունը ժամեր-
գութիւն ըսուեցաւ : Հանդիսադիրն էր Ամենա-
պատիւ Գերերջանիկ Հոգեւոր Տէրը , Պօղոս
Պատրիարք ԺԳ . Կ . Պատրիարք Տանն Կիլիկիոյ ,
Ներկայ էին Արհի . Արհի . Յովսէփ Արքեպ .
Ռոքոսեան Կ . Պ . Փոխանորդը , Օգոստինոս
Արքեպսկ . Սայեղեան Տեղապահ Գերապայ-
ծաւը , Մատթէոս եպիսկոպոս Սիսիւան և

Յովհաննէս եպիսկոպոս Նազիւեան Տրապիզոնի վիճակաւորը, ժամերգութիւնն անմիջապէս ետքը խաղաղութեան վրայ հմտայից քարոզ մը խօսցաւ Դեր. Կղեմէս Վ. Աստուրեան՝ Աթոռանիստ եկեղեցւոյ Մեծաւորը, Ապա Ն. Ամեն. Տէրութիւնը հայրապետական զգեստով որոշուած աղօթքներն ըրաւ և Ս. Հաղորդութեան օրհնութեամբ փակեց հանդէսը։

— Մարտ 22էն մինչև 26 հոգեւոր կրթութիւն տեղի ունեցաւ Ս. Յ. Ոսկեբերան եկեղեցւոյ մէջ։ Քարոզիչն էր Դեր. Յ. Վ. Փափագեան։

— Աւազ Բշ. Գշ. Դշ. օրերը հոգեւոր կրթութիւն տեղի ունեցաւ Ս. Երոզութեան և Բանկայթի Ս. Եղեղեցիներուն մէջ։ Առաջինին մէջ քարոզեց Արհի. Յովսէփ Արքեպիսկոպոս Ռոքոսեան Կ. Պ. Փոխանորդը, վերջինին մէջ Տրապիզոնի վիճակաւոր Արհի. Յովհաննէս եպսկ. Նազիւեան։

Այս հոգեւոր կրթութիւնները և այս սուրբ օրերու միջոցին եկեղեցիներու մէջ կատարուած հանդիսութիւնները, որոնց ներկայ գրուողներու միշտ հոծ բազմութիւն մը, շատ մեծ տպաւորութիւններ գործեցին ամենուն վրայ, և սքանչելի արդիւնքներ յառաջ բերին։

* * Արհի. Աւետիս Արքեպիսկոպոս Արփարեան, Մարաշի վիճակաւորը, Ամերիկայէն Հոռոմ գարձած է։

* * Պաղչէճիկի ժողովրդապետ Վեր. Հ. Եղուարդ Վ. Սիրունեան առողջական պատճառներու համար, Ս. Ղազարու վանքը կանչուեցաւ։ Ամեն. Հոգեւոր Տէրը Վենետիկի Միթարեանց Աբբաճօր, Արհի. Իգնատիոս եպսկ. Կիրեղեանի առաջարկութեամբ, անոր տեղը Պաղչէճիկի ժողովրդապետ անուանեց Վեր. Հ. Թադէոս Վ. Թումաճանեանը։ Վեր. Հ. Եղուարդ Վ. Սիրունեան, տարիներէ ի վեր առաքելական և անձնանուէր փութով և օրինակելի ընթացքով վարած է իր ժողովրդապետական պաշտօնը, և արժանացած է թէ՛ Ամեն. Կ. Պատրիարքներու և թէ՛ Արհի. Աբբաճօր գնահատման։

Այս առթիւ Կ. Անձագանգ կը մաղթէ տալ և կատարեալ առողջութիւն Վ. Հ. Ե.

դուարդ Սիրունեանի, և միանգամայն լիութի յաջողութիւն Վ. Հ. Թումաճանեանի, որուն թէ՛ դաւաններու և թէ՛ Պոլսոյ մէջ մատուցած ծառայութիւնները ծանօթ են ամենուն։

ՆԵՐՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳՈՅԻՆ ԳՈՐԾԵՐ. —

Այս վերջին երկու շաբթուան ամենէն կարեւոր գէպքն եղաւ Մարտ 18ին Տարտանէլի առջեւ տեղի ունեցած կոիւր, ուր Օսմանյիք տնղիւֆրանսական ծովային յարձակումը մեծ յաջողութեամբ ետ մղեցին, մէկ օրուան մէջ երեք թշնամի զրահաւոր նաւեր ընկղմելով և մի քանի մարտանաւերու այ տեղի կամ նուազ վնասներ հասցնելով։ Այս մասին Օսմ. Ազգ. Գործակալութեան Տարտանէլի թղթաւիկը հաղորդեց հետեւեալը. — «Տարտանէլ հինգշաբթի օր (Մարտ 18) թատր եղաւ զարհուրելի ճակատամարտի մը, ուր մեր քաջարի զինուորներուն դիւցապնութիւնը և տ. մեհմանձ քաջութիւնը դարձեալ ի յայտ եկան ամենափայլուն կերպով։ Թշնամին առտուան ժամը 11¹/₂ին միջոցները մեր ամրոցներուն դէմ բուռն կրակ մը բացաւ։ 19 մարտանաւերով և իր սովորութեան համեմատ սկսաւ ռումբերու տարափ մը տեղացնել։ Ռումբերու այս ուրականին ներքեւ ամրոցներուն և մարտկոցներուն պաշտպանները հիմնալի պազարեամբ և հաստատամտութեամբ կատարեցին իրենց պարտքը և առանց աճապարանքի պատասխանեցին թշնամիին բուռն կրակին, որպէս թէ իրենց չուրջ տեղացող ռումբերը երենց համար չէին։ Ռմբաւորութեանը այս կերպով տեւեց մինչև կէսօրէ ետք։ Այս միջոցին, Պալիկ զրահաւորը, որ 13,000 թնո տարողութիւն ունի, թշնամիին ցոյց առած յանգձնութեան առաջին զոհը եղաւ և ընկղմուեցաւ։ Դաշնակից նաւատորմին ենթարկուած այս հարուածին հետեւանօք, անգլ. և Ֆրանս. զրահաւորներուն մէկ մասը ժամը 3ին քաշուեցաւ կոիւրի գիծէն և մնացողները շարունակեցին կրակ ընել երկար ընդհատումներով։ Այս կոիւրին տուեալ թշնամին Պալիկէն զատ կորսնցուց 10 օրիկանաւ մը մէկը Իրրեկիսիսի և միւսը Ափրիկայի ձեւով, իր զրահաւորներէն երկուքը ծանրապէս վիրաւորուեցան։

«Այս վերջին երկու միութիւնները անշարժ և իրենց կողին վրայ պառկած մնացին։ Անշարժ մնացած այս երկու նաւերը կէս գիշերին մօտ ընկղմուեցան մեր մարտկոցներուն կրակով, որոնք Պուլիին միանալու զրկեցին զանոնք։ Մեր օդանաւորիներէն մին, որ հետազօտութեան համար թռիչք կատարեց, տեսաւ երկու ծխնելոյզով թշնամի մարտանաւ մը, որ դէպի Թէնէտոս կը քաշուէր ուրիշ բազմաթիւ նաւերու ընկերակցութեամբ։ Ստոյգ է թէ իր սեփական միջոցներով յառաջանալու անկարող եղած այդ միութիւնը կոխ մղելու վիճակի մէջ չէ այլեւս։ Իր ինքնութիւնը կարելի չէ եղած հաստատել որոշ կերպով մը, բայց կ'ենթադրուի թէ կը պատկանի Բոռնոսի տիպարին։ Իմացայ թէ այս կոխին պահուն մեր կորուստները աննշան եղած են։ Տարտանէլի պաշտպանները այս անգամ ալ ցոյց տուին թէ արժանի էին այն վստահութեան, զոր ազգը դրած էր իրենց վրայ և բովանդակ աշխարհի ցոյց տուին թէ այն հերոս օսմանցիներն էին որ իրենց կուրծքը պատուար կ'ընէին պողպատով զինուած յարձակողներու դէմ, որպէս զի անոնք չկարենան հայրենեաց հողը ռոտակոխ ընել։ Յիշուած երեք մարտանաւերուն արժէքն է 4½ միլիոն սղերլին, տարողութիւնը 45,000 թոնո, նաւաղներուն թիւը 3000 և թնդանօթներուն թիւը 151։»

—Տարտանէլի մեծ կոխէն յետոյ անգլեւֆրանսական նաւատորմին հրամանատարը փոխուեցաւ և ամբողջներուն ղէմ մօբակոծութիւնները, որ առաջ ստէպ տեղի կ'ունենային, դադարեցան։

* Օտմ. բնդհ. բանակեաղէն Մարտ 27ին
* * թշնամի թորփիլանաւեր և անկանաւաք նաւեր երէկ իրիկուն փորձեցին

մանկ Տարտանէլի նեղուցին մէջ, բայց ետ մղուեցան մեր մարտկոցներուն կրակով։

Մարտ 28 Ա. — Ռուսական քանի մը մարտանաւեր, որոնք Սեւ Մովի նեղուցին մէջ մեր զինութեան կայաններէն նշմարուած էին, այս առտու շատ հեռուէն և առանց ազդեցութեան քանի մը ռուս նեւեցիկ մեր պահականաւերուն վրայ և ասպա հեռացան արագօրէն։

Բ. Թշնամութեանց միւս վայրերէն կարեւոր տեղեկութիւն մը չկայ։

* * * Կայս. Իրատէի մը համաձայն, Ծ. զօրաբանակ մը կազմուեցաւ Տարտանէլ ու շրջակայները համախմբուած զինուորական ոյժերէն և անոր հրամանատար կարգուեցաւ միւշիւր Լիման Ֆօն Չանտէրս փաշա, որ նախապէս Ա. զօրաբանակին հրամանատարն էր։ (Թանկն)

* * * Բրզէմիսլ, աւստրիական բերդը, չորս ուկէն ամիս պաշարուած մնալէն վերջը, ուտեստի չզոյութեան պատճառաւ, Մարտ 22ին Ռուսերուն յանձնուեցաւ։ Այս մասին Վիեննայէն հետեւեալ տեղեկութիւնը կը տրուի. — Բրզէմիսլի անկման մասին Ռուսերուն տարածած լուրերուն հակառակ, այստեղ ձեռնհաս շրջանակի մէջ կը հաստատուի թէ Բրզէմիսլի աւերակոյտները, պատերազմ. բոլոր իրեղէններու փճացումէն ետք, որ շատոնց պատրաստուած էր կանոնաւոր կերպով, բանակին սպարապետութեան հրամանաւ թողուեցան Ռուսերուն, առանց անոնց կողմէ առաջարկ ըլլալու և առանց բանակցութիւններ կատարուելու անոնց հետ։ Պահակագործը կը կազմէին 44,000 հետեւակազօրք և հրետածիք, երկու երրորդը երկրապահ, որոնցմէ զեղչելու է 10,000 հոգի, Մարտ 19 վերջին խուժումին ատեն կորսուած։

Բ Ա Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Դէպքեր եւ սկզբունքներ 81
Ազգ. Պատիւական Սիւնիոգոս 87
Կարապետեան Վ. ուսկի՞ց կը բաղէ իր գրածները 89

Պիսս ժ. 91
Գեորգիասի Երազր 93
Տեղեկագրական 94

ԱՐՏՕՆԱՏԻՐ

ՅՈՎԼ. Ծ. Կ. ԿԵՏԻԿԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԱԳՐԱԴԵՏ

ԳԵՈՐԳ Ծ. Վ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպարան Կ. Արմազանց Երաբարքերի, Բերա, Պայրամ փողոց քիչ Ե. Գալթ

ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ .— Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40 դէկ. արծ. վեցամսեայ՝ 20 .— մէկ թիւ՝ 1 դէկ. — Արտաւահ-
ման տար. ֆր. 10. վեցամս. 5 .— Վճարմունք կանխիկ են .
ՀԱՍՑԷ .— Կարողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, 4 .

Գոյիւ:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու է
յօդուած: 3.— Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր խկական անունը ծանուցանել Խմբագրապետին:
4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոշմ ի միասին զրկել:

Տարր. Սկզբունք Քրիստ. Վարդապետութեան. գին 2 դէկն.:

Տէր Կոմիտաս Քահանային վարքը. գին 5 դէկն.:

Եսթեր՝ ողբերգութիւն Ռասինի: Գին 3 դահեկան:

ՏՊԱՐՍՆ Կարողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայ-
նի ճախ և ի վիճակի է, որ և իցէ ապագրական գործոց համար, կը տպուին ամեն տե-
սակ ծանուցմունք, զիրքեր, տեսարներ, հրաւիրագիրներ, քարդեր, քարդ-ատրէաներ,
մահազգներ, ևւն. ևւն. Գինները անմեցելի կերպով ածան են: Գեղեցկադիտական ճա-
շակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները տնտարակոյս գոհ զիւր
ենան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves: 49.000.000

SIÈGE CENTRAL:
VIENNE I. Schottenring

SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE: *Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Drohobycz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemyśl, Salzburg, St. Poelten, Stanislan, Turnopol, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau.*

EN TURQUIE:

Constantinople et Smyrne.

SUCCURSALE DE CONSTANTINOPLE

*Siège à Galata, Place du Pont de Karakouy
Agences à Stamboul, Péra et Scutari.*

Le Wiener Bank-Werein fait toutes opérations de Banque et notamment :

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce ou marchandises;

Escompte d'effets de commerce;

Achat et vente de change sur l'Etranger;

Emission de lettres de crédit et ouverture d'accreditifs simples et documentaires;

Paiements télégraphiques en Turquie et à l'Etranger;

Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;

Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;

Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;

Garde de titres, marchandises etc.

Achat de vente de monnaies diverses, natières précieuses, monnaies d'ornements;

Caisse d'Epargne à 3. 1/2 % d'intérêt.

Location de coffre-fort (à Galata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGE (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.